

PAUL Z. BEDOUKIAN. **SELECTED NUMISMATIC STUDIES, Armenian Numismatic Society, Special Publication No 1, Los Angeles, 1981 (570 pp.).**

**ՏՈՒՔԹ. ՉԱՐԵՀ ՊՏՈՒԿԵԱՆ, ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ, Հայ Դրամագիտական Ընկերակցութիւն, Մասնաւոր Հրատարակութիւն Թիւ 1, Լոս Անճելըս, 1981 (570 էջ):**

Եթէ վերջին՝ աւելի քան երեք տասնամեակներու ընթացքին Հայ դրամագիտութիւնը հայկական ու միջազգային գիտական աշխարհին մէջ նոր հորիզոններ բացաւ ու նոր նուաճումներ արձանագրեց, այդ մէկը առաջին հերթին կը պարտինք Դոկտ. Չարեհ Պտուկեանի, որ յիշեալ ժամանակամիջոցին՝ հաւատացեալի մը ամբողջական նուիրումով հետազօտեց Հայ դրամագիտութեան բոլոր ծալքերը, ծանօթէն մինչեւ կասկածելին եւ անստոյգը, առաւել պարզելով ու արմատացրնելով ծանօթը, յաճախ փարատելով կասկածները, ու երբեմն լոյս սփռելով անծանօթին վրայ: Մոլի դրամահաւաք, Դոկտ. Չ. Պտուկեան հետեւողականօրէն մնաց գիտական ճշգրտութեան սահմաններուն մէջ, բծախնդրութեամբ մը, որուն քիչեր կը հետամտին:

«Դրամագիտական Աշխատանքներու Հաւաքածու»ն հերթով իններորդն է Դոկտ. Չ. Պտուկեանի գրչին պատկանող հատորներուն, որոնք լոյս տեսած են հայերէն կամ անգլերէն լեզուներով, 1961-1981 թթ. ու միջեւ երկարող ժամանակամիջոցին: Գրախօսուող հատորը իր կողքին տակ կ'ամփոփէ քառասուն եօթը ուսումնասիրութիւններ, յօդուածներ եւ մէկ քանի գրախօսականներ, գրուած՝ անգլերէն եւ հայերէն լեզուներով, 1952-1980 թթ. ու միջեւ, ու նախապէս հրատարակուած դրամագիտական կամ հայագիտական Հանդէսներու ու պարբերաթերթերու մէջ, ու զլիսաւորաբար՝ «Հանդէս Ամսօրեայ»ի, «The American Numismatic Society Museum Notes»ի, «Revue Des Etudes Arméniennes»ի, «Հայկագեան Հայագիտական Հանդէս»ի, «Numismatic Chronicles»ի, «Armenian Numismatic Journal»ի եւ «Բազմավէպ»ի:

Հատորին յօդուածներուն թիւը, եւ անոնց գրութեան ժամանակի տարածքը ինքնին բաւարար փաստ է նիւթերու բազմազանութեան առկայութեան, որոնք զլիսաւորաբար կը խօսին Արտաշէսեան Հարստութեան ու Հայկական Կիլիկիոյ իշխանական ու թագաւորական տուներու դրամներուն մասին: Դոկտ. Չ. Պտուկեանի ուսումնասիրութիւններն ու յօդուածները յատկանշական են անով որ անոնք դրամագիտական տուեալները յաճախ կ'օգտագործեն լուսաբանելու պատմական դէմքերու եւ դէպքերու հետ առընչուած հարցեր, որոնք այլապէս երբեմն դժուար պիտի ըլլար լուսաբանել: Յօդուածներուն ընկերակցող տախտակները, պատրաստուած Պտուկեանի յատուկ մանրամասնութեամբ

ու ճշգրտութեամբ, միայն կը վկայեն տարուած աշխատանքին գիտական մակարդակին ու մասնագիտական տարողութեան մասին:

Իրենց բնոյթով քիչ մը տարբեր, եւ սակայն իրենց բովանդակութեամբ հետաքրքրական եւ ուսանելի են հատորին մէջ ներգրաւուած «Կիլիկեան Հայաստանի Վաճառականութիւնը» (էջ 359-370), եւ «Հոլանտա Կոխուած 18-րդ Դարու Հայ Մետալներ» (էջ 506-533) յօդուածները:

Առանց նիւթերուն ժամանակագրական կամ այրբենական դասաւորումին (քառասուն եօթը յօդուածները հրատարակուած են իրենց առաջին տպագրութեան ժամանակագրութեամբ), հատորը իր ամբողջութեան մէջ հայ դրամագիտութեան առձեռն հանրագիտարան մը կարելի է համարել, հայ դրամագիտութեան ու հայ ժողովուրդի պատմութեան ուսանողին համար տեւականօրէն օգտագործելի: